ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2020թ. օգոստոսի 28-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնի 2020-2021 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկման և հաստատման հարցը:
2. Ամբիոնի դասախոսների 2020-2021 ուսումնական տարվա առարկայական ծանրաբեռնվածության ներկայացման հարցը:
3. Ամբիոնի գծով 2020-2021 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերի, առարկայական թեմատիկ տրոհումների քննարկման և հաստատման, Classroom էլ.հարթակ ներբեռնելու երաշխավորման հարցը:
4. 2020-2021 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:
5. 2020-2021 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:
6. Ամբիոնի հայցորդներ՝ Մ.Աբասյանի և Լ.Ղազարյանի ատենախոսությունների թեմաների քննարկման և հաստատման հարցը:
7. Ամբիոնի 2020-2021 ուստարվա ընթացքում ուսումնամեթոդական, հետազոտական և կազմակերպչական խմբերը հաստատելու՝ ուսումնամեթոդական խմբի համակարգող մ.գ.թ.,դոցենտ Ա.Դալլաքյան, հետազոտական և կազմակերպչական խմբի համակարգող՝ Մ.Ամիրաղյան, Ա.Դալլաքյան, Վ,Կարապետյան:
8. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ 1-Ամբիոնի 2020-2021 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա. Դալլաքյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2020-2021 ուսումնական տարվա աշխատանքային պլանը: Ամբիոնի աշխատանքնային գործունեությունը ծավալել համաձայն աշխատանքային պլանի:

ԼՍԵՑԻՆ 2- Ամբիոնի դասախոսների 2020-2021 ուսումնական տարվա առարկայական ծանրաբեռնվածության ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա. Դալլաքյանը

ՈՐՈՇԵՑԻՆ-Ըստ առարկայական ծանրաբեռնվածության դասավանդվող առարկաները համակարգել ըստ բովանդակության և դասախոսի գիտական ու մեթոդական հետաքրքրությունների:

ԼՍԵՑԻՆ 3-Ամբիոնի գծով 2020-2021 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերի, առարկայական թեմատիկ տրոհումների քննարկման և հաստատման, Classroom էլ. հարթակ ներբեռնելու երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Թ. Նալբանդյանը

Ամբիոնի մասնագետը ներկայացրեց Classroom էլ. հարթակում աշխատանքները կատարելու ժամկետները, ձևաչափերը և աշխատանքի ընթացակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2020-2021 ուս.տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերն ըստ նոր ձևաչափի ու առարկայական թեմատիկ տրոհումները /ծանրաբեռնվածությունը նախօրոք քննարկվել և ներկայացվել է/, երաշխավորել Google Classroom ներբեռնելու համար:

ԼՍԵՑԻՆ 4-2020-2021 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերը, դրանք տեղադրել էլեկտրոնային հարթակում:

ԼՍԵՑԻՆ 5-2020-2021 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել ներկայացված քննական հարցաշարերը:

ԼՍԵՑԻՆ 6- Ամբիոնի հայցորդներ՝ Մ.Աբասյանի և Լ.Ղազարյանի ատենախոսությունների թեմաների քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի 2019-20 ուս.տարվա հայցորդ Մարինե Աբասյանի ատենախոսության թեման հետևյալ վերնագրով «Նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական զարգացման օրինաչափությունները ակմեկվալիտատիվ հայեցակարգի համատեքստում», և գիտական ղեկավար նշանակել՝ հ.գ.դ. պրոֆեսոր Վ.Ս.Կարապետյանին:

Հաստատել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի 2019-20 ուս.տարվա հայցորդ Լիլիթ Ղազարյանի ատենախոսության թեման հետևյալ վերնագրով «Ավագ նախադպրոցականի ինքնուրույն վարքագծի օրինաչափ դրսևորումները փորձարարական գործունեության կազմակերպման գործընթացում», և գիտական ղեկավար նշանակել՝ մ.գ.թ. պրոֆեսոր Ս.Ա.Մարությանին:

ԼՍԵՑԻՆ 7-Ամբիոնի 2020-2021 ուստարվա ընթացքում ուսումնամեթոդական, հետազոտական և կազմակերպչական խմբերը հաստատելու՝ ուսումնամեթոդական խմբի համակարգող մ.գ.թ.,դոցենտ Ա.Դալլաքյան, հետազոտական և կազմակերպչական խմբի համակարգող՝ Մ.Ամիրաղյան, Ա.Դալլաքյան, Վ,Կարապետյան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վ. Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ք.Ասմարյանը

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել ուսումնամեթոդական, հետազոտական և կազմակերպչական խմբերն իրենց կազմերով, ինչպես նաև կազմակերպել և ներկայացնել աշխատանքների կատարման վերաբերյալ նախագծեր և հաշվետվություններ:

ԼՍԵՑԻՆ 8-ՀՀ ԿԳՍՄ նախարարության կողմից ստացված գրության քննարկման հարցը. «Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ցանկերի ձևավորման և աշխատանքային խմբերի փորձագետների ընտրության ընթացակարգի»՝ չափորոշիչների մշակման աշխատանքային խմբում ընդգրկվող մասնագետի ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վ. Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Հովսեփյանը, Ի. Պոնոմարենկոն

ՈՐՈՇԵՑԻՆ- «Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ցանկերի ձևավորման և աշխատանքային խմբերի փորձագետների ընտրության ընթացակարգի»՝ չափորոշիչների մշակման աշխատանքային խմբում ընդգրկվելու համար ներկայացվեց ամբիոնի դասախոս Ի.Պոնոմարենկոն:

ԼՍԵՑԻՆ 9- ՀՀ ԿՄԳՍ նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանի գրության՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշչի վերանայման նպատակով ստեղծվող աշխատանքային խմբում ամբիոնի մասնագիտական կազմի ձևավորման և ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վ. Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Հովսեփյանը, Ա. Խուգեյանը, Հ. Խաչատրյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննարկել և հաստատել ՀՀ ԿՄԳՍ նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանի գրության՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշչի վերանայման նպատակով ստեղծվող աշխատանքային խմբում ամբիոնի մասնագիտական կազմը՝ Հ.Խաչատրյան, Ա. Դալլաքյան, Մ.Ամիրաղյան և Ա.Խուգեյան:

Նիստի նախագահ՝ *Վ.Ս.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Է.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2020թ. սեպտեմբերի 28-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաների քննարկման հարցը:
2. 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ քննարկման և առաջարկություններ կատարելու հարցը (ԲԿԾ առկա 3-րդ կուրս՝ ուսումնաճանաչողական պրակտիկան /շաբաթական մեկ օր/ և ԲԿԾ առկա 4-րդ կուրս՝ ամփոփիչ ավարտական պրակտիկա /6 շաբաթյա/):
3. 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասընթացների Google classroom էլ.հարթակում ուսումնական նյութերի տեղադրման և հեռավար ուսուցման իրականացման քննարկման հարցը:
4. Դասալսումների ժամանակացույցի և կազմակերպման քննարկման հարցը:
5. ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ստացված գրության՝ «Նախադպրոցական կրթության պետական չափորոշչի» վերանայման նպատակով ստեղծվող աշխատանքային խմբում ամբիոնի մասնագետների ներկայացման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1-Ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ս. Մարությանը, Ա. Դալլաքյանը, Ս.Հովսեփյանը, Հ.Սարգսյանը, Ա.Խուգեյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Քննարկել և հաստատել 2020-2021 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների ղեկավարներին և թեմաները:

ԼՍԵՑԻՆ 2- 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ քննարկման և առաջարկություններ կատարելու հարցը (ԲԿԾ առկա 3-րդ կուրս՝ ուսումնաճանաչողական պրակտիկան /շաբաթական մեկ օր/ և ԲԿԾ առկա 4-րդ կուրս՝ ամփոփիչ ավարտական պրակտիկա /6 շաբաթյա/):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա.Ղազարյանը:

Սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնաճանաչողական պրակտիկան կազմակերպվել է ս/թ. սեպտեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի 22-ը (շաբաթական մեկ օր): 4-րդ կուրսի 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է ս/թ. նոյեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 17-ը ՀՊՄՀ ռեկտորի 03.04.2020թ. 1096-Լ հրամանով սահմանված կարգով և հնարավորության դեպքում դրանք կազմակերպել առցանց:

ՈՐՈՇԵՑԻՆ- Պրակտիկաները կազմակերպել պրակտիկայի ղեկավար Ա.Ղազարյանի ներկայացրած խմբերի ղեկավարների, ուսանողների և մանկապարտեզների ցանկով՝ առցանց ձևաչափով, ակտիվացնել յուրաքանչյուր խմբի համար Google Classroom էլ.հարթակ:

ԼՍԵՑԻՆ 3- 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասընթացների Google classroom էլ.հարթակում ուսումնական նյութերի տեղադրման և հեռավար ուսուցման իրականացման քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Թ.Նալբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունել ի գիտություն՝ համավարակով պայմանավորված 1-ին կիսամյակի ուսուցումն առցանց ձևաչափով աշխատանքների կազմակերպման ընթացակարգը և առաջնորդվել դրանով:

ԼՍԵՑԻՆ 4- Դասալսումների ժամանակացույցի և կազմակերպման քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի առցանց դասալսումների կազմակերպման ժամանակացույցը:

ԼՍԵՑԻՆ 5- ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ստացված գրության՝ «Նախադպրոցական կրթության պետական չափորոշչի» վերանայման նպատակով ստեղծվող աշխատանքային խմբում ամբիոնի մասնագետների ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Ք.Ասմարյանը, Ա.Խուգեյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննարկել և հաստատել օգոստոսի 10-ից 19-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ-ի և Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի կողմից կազմակերպվող նախակրթարանի դաստիարակների համար առցանց վերապատրաստման կազմակերպման աշխատանքները, վերապատրաստման մոդուլային ծրագիրը, դասացուցակը, առցանց վերապատրաստման իրականացման արդյունավետ եղանակները:

Նիստի նախագահ՝ *Վ.Ս.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Է.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2020թ. հոկտեմբերի 14-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի առցանց կազմակերպման հարցը (3 շաբաթ):
2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի Google classroom էլ. հարթակում ստեղծված էջերում աշխատանքների կազմակերպման հարցը:
3. Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքի թեմաների և ղեկավարների քննարկման և հաստատման հարցը:
4. Ամբիոնի դասախոսների 2020 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի քննարկման և ներկայացման հարցը:
5. 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-5 կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների Google classroom էլ.հարթակում էջերի ստեղծման, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի ներբեռնման քննարկման հարցը:
6. «Բուկինիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված խաղ-վիկտորինաները, սեղանային խաղերը որպես ուսումնաօժանդակ նյութի կիրառման նպատակահարմարության քննարկման և մասնագիտական կարծիք տրամադրելու վերաբերյալ հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի առցանց կազմակերպման հարցը (3 շաբաթ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա.Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրոսական կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 2020-2021 ուստարվա նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 2-րդ կուրսի 1-ին կիսամյակի

մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպել 2020 թ. նոյեմբերի 2-ից մինչև 20-ը: ՀՊՄՀ ռեկտորի 03.04.2020թ. 1096-Լ հրամանով սահմանված կարգով և հնարավորության դեպքում դրանք կազմակերպել առցանց՝ ըստ ներկայացված դասացուցակի:

ԼՍԵՑԻՆ 2- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի Google classroom էլ. հարթակում ստեղծված էջերում աշխատանքների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Թ.նալբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ստեղծված էլ.էջերում տեղադրել խորհրդատվությունների ժամանակացույց՝ ավարտական կուսրերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շրջանակում ուսանողների հետ քննարկումների և իրականացվող աշխատանքների կազմակերպման համար:

ԼՍԵՑԻՆ 3- Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքի թեմաների և ղեկավարների քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Ղազարյանը, Ք.Ասմարյանը, Մ.Ամիրաղյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել ԲԿԾ հեռակա ուսուցման համակարգի Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքներիի թեմաները և ղեկավարներին:

ԼՍԵՑԻՆ 4- Ամբիոնի դասախոսների 2020 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի քննարկման և ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Թ.Նալբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննարկել և հաստատել Ամբիոնի դասախոսների 2020 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի ցանկը, տեղադրել համապատասխան ձևաչափում և ներկայացնել գիտահետազոտական կենտրոն՝ նշված ժամկետում:

ԼՍԵՑԻՆ 5-2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-5 կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների Google

classroom էլ.հարթակում էջերի ստեղծման, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի ներբեռնման քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Թ.Նալբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-5 կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների Google classroom էլ.հարթակում էջերի ստեղծման, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի, գնահատվող առաջադրանքների տեղադրման աշխատանքները ըստ ներկայացված ժամանակացույցի կազմակերպելու աշխատանքները:

ԼՍԵՑԻՆ 6- «Բուկինիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված խաղ-վիկտորինաները, սեղանային խաղերը որպես ուսումնաօժանդակ նյութի կիրառման նպատակահարմարության քննարկման և մասնագիտական կարծիք տրամադրելու վերաբերյալ հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Մ.Ավագյանը

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել «Բուկինիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված խաղ-վիկտորինաների, սեղանային խաղերի վերաբերյալ ներկայացված մասնագիտական կարծիքները և ներկայացնել գիտահետազոտական կենտրոն:

Նիստի նախագահ՝ Վ.Ս.Կարապետյան

Նիստի քարտուղար՝ Թ.Է.Նալբանդյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2020թ. նոյեմբերի 22-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի առցանց կազմակերպման հարցը:
2. Ամբիոնի ասիստենտ, մ.գ.թ. Մ.Ավագյանի «Համագործակցային կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները նախադպրոցական հաստատություններում» ուսումնամեթոդական ձեռնարկի հիմնական դրույթների և մեթոդաբանական հայեցակարգի քննարկման հարցը:
3. Խարկովի ազգային մանկավարժական համալսարանի գիտաժողովի կազմակերպչական հարցերի քննարկման, ինչպես նաև նույն համալսարանի ամսագրի խմբագրական խորհրդում Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մասնագետների ներկայացման հարցը:
4. Ուկրաինայի մանկավարժական գիտությունների ազգային ակադեմիայի սոցիալական հոգեբանության ինստիտուտի կողմից կազմակերպված հոգեբանության և մանկավարժության հարցերին նվիրված գիտաժողովին ամբիոնի վարիչ Վ.Ս.Կարապետյանի մասնակցության և գիտաժողովի նյութերի քննարկման հարցը:
5. Հեռակա 1-ին կուրսի առցանց խորհրդատվությունների կազմակերպման հարցը:
6. Նախադպրոցական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրի ներկայացման, քննարկման և հաստատման հարցը:
7. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ 1- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի առցանց կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա.Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկան համավարակով պայմանավորված ուշ մեկնարկելու կապակցությամբ կավարտվի դեկտեմբերի 22-ին, պրակտիկան կամփոփվի

պրակտիկայի թղթապանակների պաշտպանությամբ և ուսանողները կգնահատվեն հանձնաժողովի կողմից:

ԼՍԵՑԻՆ 2- Ամբիոնի ասիստենտ, մ.գ.թ. Մ.Ավագյանի «Համագործակցային կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները նախադպրոցական հաստատություններում» ուսումնամեթոդական ձեռնարկի հիմնական դրույթների և մեթոդաբանական հայեցակարգի քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Մ.Ավագյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ուսումնասիրել և ներկայացնել առաջարկներ ամբիոնի ասիստենտ մ.գ.թ. Մ.Ավագյանի «Համագործակցային կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները նախադպրոցական հաստատություններում» ուսումնամեթոդական ձեռնարկի վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ 3- Խարկովի ազգային մանկավարժական համալսարանի գիտաժողովի կազմակերպչական հարցերի քննարկման, ինչպես նաև նույն համալսարանի ամսագրի խմբագրական խորհրդում Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մասնագետների ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննարկել և հաստատել Խարկովի ազգային մանկավարժական համալսարանի գիտաժողովում Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի որպես կազմակերպիչ ներգրավման, ինչպես նաև նույն համալսարանի ամսագրի խմբագրական խորհրդում ներկայացնել ամբիոնի մ.գ.թ., դոցենտներ Ա.Դալլաքյանի և Հ.Սարգսյանի թեկնածությունները:

ԼՍԵՑԻՆ 4- Ուկրաինայի մանկավարժական գիտությունների ազգային ակադեմիայի սոցիալական հոգեբանության ինստիտուտի կողմից կազմակերպված հոգեբանության և մանկավարժության հարցերին նվիրված գիտաժողովին ամբիոնի վարիչ Վ.Ս.Կարապետյանի մասնակցության և գիտաժողովի նյութերի քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել ամբիոնի վարիչ Վ.Կարապետյանի Ուկրաինայի մանկավարժական գիտությունների ազգային ակադեմիայի սոցիալական հոգեբանության ինստիտուտի կողմից կազմակերպված հոգեբանության և մանկավարժության հարցերին նվիրված գիտաժողովին մասնակցությունը:

ԼՍԵՑԻՆ 5- Հեռակա 1-ին կուրսի առցանց խորհրդատվությունների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել հեռակա 1-ին կուրսի առցանց խորհրդատվությունների կազմակերպման հարցը: Ինչպես նաև ըստ ներկայացված ժամանակացույցի կազմակերպել հեռակա 2-րդ և 3-րդ կուրսերի առցանց խորհրդատվությունները:

ԼՍԵՑԻՆ 6-Նախադպրոցական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրի ներկայացման, քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննարկել Շախմատի գիտահետազոտական ինստիտուտի հետ համատեղ կանխատեսվող վերապատրաստման ծրագիրը, ըստ որի նպատակահարմար կլինի կազմակերպել մանկապարտեզում շախմատի ներգրավման վերաբերյալ վերապատրաստումներ:

Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ 7- Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդներ Մարինե Աբասյանի և Լիլիթ Ղազարյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաշվի առնելով ամբիոնի հայցորդներ՝ Մ.Աբասյանի և Լ.Ղազարյանի ներկայացրած հաշվետվությունները ատեստավորել:

Նիստի նախագահ՝ *Վ.Ս.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Է.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

2020թ. դեկտեմբերի 17-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում:
2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի և ԲԿԾ առկա 4-րդ կուրսերի և ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:
3. Ամբիոնի դասախոսների 2020 թ. գիտահետազոտական աշխատանքների և ընդհանուր գործունեության հաշվետվությունների ներկայացման հարցը:
4. Ամբիոնի դասախոսների 1-ին կիսամյակի առցանց դասալսումների քննարկման հարցը:
5. 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում առցանց ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքների վերաբերյալ հարցը:
6. Ամբիոնի 2020 թվականի տարեկան հաշվետվության հաստատման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննական առարկաների տոմսերը, քննությունները կազմակերպել ըստ ուղարկված ժամանակցույցերի:

ԼՍԵՑԻՆ 2- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի և ԲԿԾ առկա 4-րդ կուրսերի և ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, ամբիոնի դասախոսները:

Յուրաքանչյուր ղեկավար նախապես ուղարկել էր իր ուսանողների կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընթացիկ աշխատանքները համարել բավարար և արդյունավետ, ինչպես նաև էլեկտրոնային հարթակում՝ ավարտական կուրսերի

խորհրդատվությունների էջերում պարբերաբար պահպանել ուսանողների հետ հետադարձ կապը, շարունակել ուղղորդել նրանց:

ԼՍԵՑԻՆ 3- Ամբիոնի դասախոսների 2020 թ. գիտահետազոտական աշխատանքների և ընդհանուր գործունեության հաշվետվությունների ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացված ժամկետներում և պահանջվող ձևաչափերով լրացնել տեղեկատվությունը և ավարտին հասցնել հանձնարարությունները:

ԼՍԵՑԻՆ 4- Ամբիոնի դասախոսների 1-ին կիսամյակի առցանց դասալսումների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ-Առցանց դասալսումների գործընթացի կազմակերպումը համարել բավարար, նշելով, որ դասընթացները բովանդակային առումով հիմնականում արդյունավետ էին, սակայն պետք է փաստել, որ շատ դասախոսներ դժվարանում էին կիրառել էլ.հարթակի գործիքակազմը՝ էկրան կիսել, դասի ընթացքում ցուցադրել որևէ սահիկ կամ տեսահոլովակ:

ԼՍԵՑԻՆ 5-2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում առցանց ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքների վերաբերյալ հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Թ.Նալբանդյանը:

Ամբիոնի մասնագետի կողմից իրականացրած մշտադիտարկման հաշվետվությունն ուղարկվել է բոլոր դասախոսներին, որում հստակ ներկայացված են դասախոսների բաղթողումներն ու թերացումները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հետագա աշխատանքներում շտկել նշված թերացումները:

ԼՍԵՑԻՆ 6-Ամբիոնի 2020 թվականի տարեկան հաշվետվության հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել ամբիոնի 2020 թվականի տարեկան հաշվետվությունը:

Նիստի նախագահ՝ Վ.Ս.Կարապետյան

Նիստի քարտուղար՝ Թ.Է.Նալբանդյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

2021թ. հունվարի 25-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման հարցը:
2. Հեռակա 1-ին կուրսի 1-ին և 2-րդ կիսամյակների դասընթացների կազմակերպման հարցը:
3. 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման և Google Classroom ներբեռնելու հարցը:
4. 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:
5. 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակի դասալսումների կազմակերպման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2020-21 ուստարվա 2-րդ կիսամյակի քննական առարկաների տոմսերը:

ԼՍԵՑԻՆ 2- Հեռակա 1-ին կուրսի 1-ին և 2-րդ կիսամյակների դասընթացների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ-Ըստ ներկայացված դասացուցակի կազմակերպել հեռակա 1-ին կուրսի 1-ին և 2-րդ կիսամյակների դասընթացները, քլասրում էլ. հարթակում բացել դասընթացների էջերը, տեղադրել առարկայական նկարագրերը:

ԼՍԵՑԻՆ 3- 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման և Google Classroom ներբեռնելու հարցը:

Որոշեցին-Հաստատել 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ԱՈՒՄՓ-ները: Ամբիոնի քլասրում էջով բացել և տեղադրել բոլոր առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները համապատասխան էջերում,

յուրաքանչյուր դասախոս նշված ժամկետում պետք է կատարի անհրաժեշտ լրացումները և աշխատանքները կատարել ըստ ընթացակարգի։

ԼՍԵՑԻՆ 4- 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -Վ. Կարապետյանը, Ս.Մարությանը

ՈՐՈՇԵՑԻՆ -Հաստատել միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերը։

ԼՍԵՑԻՆ 5-2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակի դասալսումների կազմակերպման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -Վ. Կարապետյանը, Ս.Մարությանը

ՈՐՈՇԵՑԻՆ-Կազմել դասալսումների ժամանակացույց և առաջնորդվել դրանով։

Նիստի նախագահ՝ *Վ. Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ. Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

2021թ. փետրվարի 19-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնաճանաչողական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:
2. ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ընթացիկ հաշվետվությունների ներկայացում՝ ուսանողների և ղեկավարների ներգրավմամբ:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ 1-Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնաճանաչողական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ. Կարապետյանը, Ա.Ղազարյանը

Պրակտիկայի ղեկավար Ա.Ղազարյանը նախապատրաստական կոնֆերանսին ներկացրեց ուսումնաճանաչողական պրակտիկայի ղեկավարներին և խմբերին, ինչպես նաև մանկապարտեզները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քլասրում էլ.հարթակում ըստ խմբերի բացվել համապատասխան քլաս էջեր և պրակտիկան կազմակերպել ըստ ընթացակարգի:

ԼՍԵՑԻՆ 2- ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ընթացիկ հաշվետվությունների ներկայացում՝ ուսանողների և ղեկավարների ներգրավմամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ. Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Ք.Ասմարյանը, Ա.Ղազարյանը:

Բոլոր ղեկավարները նախապես ուղարկել էին յուրաքանչյուր ուսանողի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ-ՄԿԾ 2-րդ կուրսի ուսանողները ներկայացրեցին մագիստրոսական թեզի վերաբերյալ հաշվետվությունները, բոլոր աշխատանքները վերջնական փուլում են:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ 3- Ամբիոնի հայցորդների աշխատանքային գործունեության ընթացքի մասին /հաշվետվություն/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը

Ամբիոնի հայցորդներ՝ Մ.Աբասյանը և Լ.Ղազարյանը ներկայացրեցին իրենց հաշվետվությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հայցորդների աշխատանքային գործունեությունը համարել բավարար:

Նիստի նախագահ՝ *Վ.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

2021թ. մարտի 15-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԳԻՐ

1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին հարցը:
2. Հեռակա ուսուցման համակարգի ԲԿԾ 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման հարցը:
3. ԲԿԾ առկա 4-րդ և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին հարցը:

ԼՍԵՑԻՆ 1-Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Ղազարյանը, պրակտիկայի ղեկավարները

Պրակտիկայի ղեկավար Ա.Ղազարյանը ներկայացրեց պրակտիկայի բնականոն ընթացքը:

ԼՍԵՑԻՆ 2-Հեռակա ուսուցման համակարգի ԲԿԾ 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման հարցը:

Նախապատրաստական կոնֆերանսի ընթացքում ներկայացվեցին պրակտիկայի ղեկավարները, ուսանողները և մանկապարտեզները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վ.Կարապետյանը, Ա.Ղազարյանը

ՈՐՈՇԵՑԻՆ Աշխատող ուսանողներն ըստ պրակտիկայի կանոնակարգի և ներկայացրած փաստաթղթերի՝ մանկավարժական պրակտիկան կանցկացնեն իրենց աշխատավայրում:

ԼՍԵՑԻՆ 3- ԲԿԾ առկա 4-րդ և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Կազմակերպել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական քննարկում:

Նիստի նախագահ՝ ***Վ.Կարապետյան***

Նիստի քարտուղար՝ ***Թ.Նալբանդյան***

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

2021թ. ապրիլի 12-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով ԲԿԾ առկա 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունների արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:
2. Google classroom էլեկտրոնային հարթակում դասախոսների աշխատանքների մշտադիտարկումների արդյունքների մասին:
3. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ 1- Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով ԲԿԾ առկա 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունների արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:

- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 4-րդ կուրս թվով 20 ավարտական աշխատանք
- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրս թվով 16 մագիստրոսական աշխատանք

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ս.Հովսեփյանը, Մ.Ավագյանը, Ա.Խուգեյանը, Մ.Ամիրաղյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Նախապաշտպանության արդյունքների վերլուծության հիման վրա /ապրիլի 12-16/ երաշխավորել հրապարակային պաշտպանության ներկայացված ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական ատենախոսությունները:

ԼՍԵՑԻՆ 2-Google classroom էլեկտրոնային հարթակում դասախոսների աշխատանքների մշտադիտարկումների արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վ.Կարապետյանը, Թ.Նալբանդյանը

Ամբիոնի մասնագետ Թ.Նալբանդյանը մշտադիտարկել է Google Classroom էլ. հարթակի աշխատանքները և ներկայացրել արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ-Մշտադիտարկման արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ 3-Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վ.Կարապետյանը, Ա.Ղազարյանը:

Նախապատրաստական կոնֆերանսի ընթացքում ներկայացվեցին պրակտիկայի ղեկավարները, ուսանողները և պրակտիկայի ընթացակարգը՝ ըստ ներկայացված դասացուցակի:

ՈՐՈՇԵՑԻՆ- Մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպել ըստ դասացուցակի, ակտիվացնել քլասրում էջ, տեղադրել համապատասխան փաստաթղթերը:

Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ 4- Ամբիոնի 2020-21 ուս.տարվա հայցորդ Հեղինե Ավետիսյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ս.Հովսեփյանը, Հ.Սարգսյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի 2020-21 ուս.տարվա հայցորդ Հեղինե Ավետիսյանի ատենախոսության թեման հետևյալ վերնագրով «Ինտերակտիվ պարապմունքների կլաստերային վերլուծությունը նախադպրոցական հաստատություններում», և գիտական ղեկավար նշանակել՝ մ.գ.թ. դոցենտ Հ.Սարգսյանին:

ԼՍԵՑԻՆ 5- 2021-2022 ուսումնական տարում «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրով հեռակա ուսուցում կազմակերպելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյան, Ա.Դալլաքյան, Ս.Մարության, Ա.Ղազարյան, Ք.Ասմարյան, Ա.Խուգեյան:

Ելույթ ունեցողները ներկայացրին հեռակա ուսուցման կրթական ծրագրի մշակման ընթացքը սկսած 2020 թվականի նոյեմբեր ամսից, ստորև ներկայացված

փաստաթղթերով. մասնագիտական կրթական ծրագիր, ուսումնական պլան, ըստ ուսումնական պլանի դասընթացների առարկայական նկարագրեր:

ՈՐՈՇԵՑԻՆ- հաշվի առնելով նախադպրոցական կրթության համակարգում «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության ՄԿԾ հեռակա ուսուցման պահանջարկը (նախադպրոցական կրթության ոլորտում աշխատողներ), ներկայացնել ուսումնական ծրագրի ամբողջական փաթեթ սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդում քննարկելու և հետագա ընթացքը կազմակերպելու համար:

Նիստի նախագահ՝ *Վ. Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ. Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

2021 թ. ապրիլի 30-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների (թվով 29) նախապաշտպանությունների արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը: *(Հարցի քննարրումն ամբիոնի աշխատանքային պլանով նախատեսված է մայիս ամսին, սակայն գիտահետազոտական կենտրոնի շրջաբերականի ժամանակացույցին հետևելով, այս հարցը քննարկվում է ապրիլ ամսին):*
2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտությամբ տարկետումից վերադարձած ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսի ուսանողուհի՝ Շուշանիկ Մուրադյանի ավարտական աշխատանքի երաշխավորման հարցը:

ԼՍԵՑԻՆ- Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների (թվով 29) նախապաշտպանությունների արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը: *(Հարցի քննարրումն ամբիոնի աշխատանքային պլանով նախատեսված է մայիս ամսին, սակայն գիտահետազոտական կենտրոնի շրջաբերականի ժամանակացույցին հետևելով, այս հարցը քննարկվում է ապրիլ ամսին):*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Հ.Սարգսյանը, Ս.Մարությանը, Ս.Հովսեփյանը, Մ.Ավագյանը, Ա.Խուգեյանը, Ի.Պոնոմարենկոն

ՈՐՈՇԵՑԻՆ-

1. Նախապաշտպանության արդյունքների վերլուծության հիման վրա (ապրիլի 27-29) երաշխավորել հրապարակային պաշտպանության թվով 21 ավարտական աշխատանքներ, որոնք ներկայացվում են:
2. Թվով 8 ավարտական աշխատանքներ, որոնք ունեին որոշակի թերություններ և ավարտուն տեսքի բերված չէին, նշանակել կրկնակի նախապաշտպանություն

ս.թ. մայիսի 6-ին և առանձին քաղվածքով մինչև մայիսի 10-ը ներկայացնել դեկանատ:

ԼՍԵՑԻՆ 2- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտությամբ տարկետումից վերադարձած ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսի ուսանողուհի՝ Շուշանիկ Մուրադյանի ավարտական աշխատանքի երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Ս.Հովսեփյանը, Մ.Ավագյանը, Ա.Խուգեյանը, ուսանողուհի Շ.Մուրադյանը

Վ.Կարապետյանը նշեց, որ Մանկավարժություն և հոգեբանություն (նախադպրոցական) մասնագիտության փակվելու պատճառով Շ.Մուրադյանը տարկետումից հետո՝ իր դիմումի համաձայն վերականգվել է Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության բաժնում: Ուսումնական պլանի համաձայն հանձնել է բոլոր առարկայական տարբերությունները: Ավարտական աշխատանքի վերնագիրն է *«Երեխաների մանկավարժահոգեբանական ուղեկցման տեսական և մեթոդական հիմքերը նախադպրոցական հաստատություններում»:* Թեմայի վերաբերյալ տրվել են բոլոր հանձնարարականները:

Ամբիոնի հետ առերես քննարկման ժամանակ ուսանողուհի Շ.Մուրադյանը նշեց, որ ունի մանկահասակ երեխաներ, հնարավորություն և ժամանակ չի ունեցել արդյունավետ աշխատելու իր ավարտական աշխատանքի վրա, հրաժարվում է մասնակցել նախապաշտպանությանը և կրկին անգամ ցանկություն հայտնեց վերցնել տարկետում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Շուշանիկ Մուրադյանի ավարտական աշխատանքը չերաշխավորել հրապարակային պաշտպանության, քանի որ նա չի մասնակցել նախապաշտպանությանը: Ամբիոնը հանձնարարեց Շ.Մուրադյանին 1 տարվա ընթացքում կապ պահպանել ղեկավարի և ամբիոնի հետ՝ ավարտական աշխատանքը ժամանակին և պատշաճ կերպով ավարտին հասցնելու նպատակով:

Նիստի նախագահ՝ Վ.Կարապետյան

Նիստի քարտուղար՝ Թ.Նալբանդյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

2021թ. մայիսի 6-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսի չերաշխավորված ավարտական աշխատանքների (թվով 8) կրկնակի նախապաշտպանության արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:
2. Ամփոփիչ ավարտական քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:
3. 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսի չերաշխավորված ավարտական աշխատանքների (թվով 8) կրկնակի նախապաշտպանության արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Ք.Ասմարյանը, Մ.Ավագյանը, Ա.Խուգեյանը, Ի.Պոնոմարենկոն, Լ.Պողոսյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Կրկնակի նախապաշտպանության արդյունքների հիման վրա երաշխավորել թվով 8 ավարտական աշխատանքները հրապարակային պաշտպանության:

ԼՍԵՑԻՆ 2- Ամփոփիչ ավարտական քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Թ.Նալբանդյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Նախապատրաստվել ամփոփիչ ավարտական քննություններին, որոնք կազմակերպվելու են առցանց տարբերակով, նշված ժամկետում ներկայացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարների կարծիքները և գրախոսությունները, ուսանողների աշխատանքները PDF ձևաչափով և սահիկները:

ԼՍԵՑԻՆ 3-2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2-րդ կիսամյակի քննական առարկաների հարցաշարերն ու տոմսերը, քննությունները կազմակերպել ըստ ուղարկված ժամանակցույցի:

Նիստի նախագահ՝ *Վ.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 12

2021թ. հունիսի 2-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքների քննարկման հարցը:
2. 2020-21 ուսումնական տարվա ամբիոնի դասախոսների ծանրաբեռնվածության կատարման ընթացքի մասին քննարկման հարցը:
3. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ և 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պարկտիկաների պաշտպանության, հաշվետվությունների ներկայացման արդյունքների մասին հարցը:
4. 2020-2021ուս.տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ 1-Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքներն ընդունել ի գիտություն, շեշտադրել և աշխատել ուսանողների մասնագիտական գիտելիքների, նրանց ներկայացման թերացումների ուղղությամբ:

ԼՍԵՑԻՆ 2- 2020-21 ուսումնական տարվա ամբիոնի դասախոսների ծանրաբեռնվածության կատարման ընթացքի մասին քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Դասախոսների կատարած աշխատանքը համարել բավարար, առանց լուրջ թերացումների և բացթողումների:

ԼՍԵՑԻՆ 3-Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ և 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պարկտիկաների պաշտպանության, հաշվետվությունների ներկայացման արդյունքների մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վ.Կարապետյանը, Ա.Ղազարյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Նշված կուրսերի ուսումնաճանչողական և մանկավարժական պրակտիկաների պաշտպանությունները կազմակերպվել էր առցանց՝ քլասրում էլ.

հարթակում, պրակտիկայի կազմակերպման և պաշտպանությունների ընթացքում չեն եղել խնդիրներ, ամբիոնը գործընթացը համարում է բավականին արդյունավետ՝ չնայած առցանց ձևաչափի:

ԼՍԵՑԻՆ 4-2020-2021ուս.տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ-Ըստ ուղարկված ժամանակցույցերի կազմակերպել 2-րդ կիսամյակի քննաշրջանը:

Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ 5- ՖԻԴԵ-ի և Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի համագործակցության արդյունքում Շախմատը նախադպրոցական հաստատություններում ծրագրի մեկնարկի և դաստիարակների վերապատրաստումների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Մ.Ամիրաղյանը, Ա.Խուգեյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- ՖԻԴԵ-ի և Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի համագործակցության արդյունքում որոշվեց, որ ամբիոնի ողջ անձնակազմը կմասնակցի դաստիարակների վերապատրաստման ծրագրին, կկազվի համապատասխան վերապատրաստման ծրագիր:

ԼՍԵՑԻՆ 6 - Ամբիոնի հայցորդ Ժաննա Հարությունյանի թեմայի վերահաստատման և գիտական ղեկավարի առաջադրման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյան, Ս.Մարության, Ա.Դալլաքյան, Ա.Ղազարյան, Ք.Ասմարյան, Հ.Սարգսյան:

ՈՐՈՇԵՑԻՆ- հաստատել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդ Ժաննա Հարությունյանի ատենախոսության թեման հետևյալ վերնագրով «Շախմատային նախագիտելիքի ձևավորման մանկավարժական պայմանները ավագ նախադպրոցական տարիքում», և գիտական ղեկավար նշանակել՝ մ.գ.թ., պրոֆեսոր Ս.Մարությանին:

ԼՍԵՑԻՆ 7- Ամբիոնի 2020-21 ուս.տարվա հայցորդ Հեղինե Ավետիսյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ս.Հովսեփյանը, Հ.Սարգսյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի 2020-21 ուս.տարվա հայցորդ Հեղինե Ավետիսյանի ատենախոսության թեման հետևյալ վերնագրով «Ինտերակտիվ պարապմունքների կլաստերային վերլուծությունը նախադպրոցական հաստատություններում»՝ ԺԳ 00.01.-Մանկավարժության տեսություն և պատմություն թվանիշով և գիտական ղեկավար նշանակել՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Դալլաքյանին:

Նիստի նախագահ՝ *Վ.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*